



Project funded by
EUROPEAN UNION



ՄԱՍԼՈՂ ԶԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

02.06.2022, **անմիջապես հրապարակման համար**

Անդրսահմանային դաշինք հանուն Սևծովյան ավազանում կլիմային ուղղված և կանաչ գյուղատնտեսության (AGREEN)

Դաշտային այց, Դոբրիչ, Բուլղարիա - 30.05-31.05.2022

2021 թվականից մեկնարկել է AGREEN նախագիծը, որը որդեգրել է կլիմային ուղղված գյուղատնտեսության հայեցակարգը՝ որպես գյուղատնտեսական ռազմավարությունների մշակման մոտեցում, որը կերաշխավորի պարենի ապահովության հարակայունությունը կլիմայի փոփոխության համատեքստում:

Նախագիծը իրականացվում է հետևյալ գործընկերների համագործակցությամբ՝ Դոբրուլջայի ագրարային և բիզնես դպրոց (Բուլղարիա), Կոնստանցայի Օվիդիուս համալսարան (Ռումինիա), Թեքիրդագի Նամիկ Քեմալ համալսարան (Թուրքիա), «Էլկանա» կենսաբանական ֆերմերային ասոցիացիա (Վրաստան), Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն հիմնադրամ (Հայաստան) և Արևելյան Սալոնիկի տեղական իշխանությունների զարգացման գործակալություն (Հունաստան):

Նախագծի շրջանակում գործընկեր երկրներում իրականացվել է իրագործելիության ուսումնասիրություն, որը հիմք է հանդիսացել էնդեմիկ սորտերի վրա հիմնված մշակաբույսերի մոդելավորման մեթոդի կիրառման միջոցով Սևծովյան ավազանի երկրների համար երեք տարբեր լուծում փորձարկել Բուլղարիայի, Թուրքիայի և Վրաստանի գործընկերների փորձարարական հողակտորների վրա: Արդյունքում ակնկալվում է ստանալ կլիմային ուղղված խելացի մշակաբույսեր, որոնք հասանելի կդառնան շահագրգիռ կողմերին:

2022 թվականի մայիսի 30-ին և 31-ին տեղի ունեցավ փորձի փոխանակման առաջին այցը՝ կազմակերպված Դոբրուլջայի ագրարային և բիզնես դպրոցի կողմից: Յուրաքանչյուր երկրում ընտրված մշակաբույսերը փորձարկվում են երկու եղանակով՝ կլիմայի նկատմամբ խելամիտ և ավանդական եղանակներով: Արդյունքում համեմատական վերլուծություն է իրականացվելու հասկանալու համար՝ որտեղ որ մշակաբույսը ինչ արդյունավետություն է դրսևորել: Մշակաբույսերի ցանկը, ըստ ամեն երկրի, հետևյալն է.

- Բուլղարիա
 - Տրիտիկալե - փորձարկումը ամբողջությամբ իրականացված է, սպասում են բերքի հասունացմանը
 - Բամիա - փորձարկումը ընթացքի փուլում է, և սածիլները պատրաստ են բաց դաշտ տեղափոխելու
- Վրաստան
 - Օրգանական ցորեն
 - Երեքնուկ
 - Ձավարեղեն, հատիկաընդեղեն, բանջարաբոստանային կուլտուրաներ (սինտրոպիկ գյուղատնտեսության մոդել)
- Թուրքիա
 - Արևածաղիկ
 - Ընկույզ

շարունակելի

Common borders. Common solutions.



Project funded by
EUROPEAN UNION



Վրաստանում և Թուրքիայում կիրառվող տեխնոլոգիաներին և փորձարկման արդյունքներին կծանոթանանք առանձին այցերի շրջանակում:

Երկօրյա միջոցառման ընթացքում տեղի ունեցան ինչպես տեսական ներկայացումներ և քննարկումներ ընտրված մշակաբույսերի յուրօրինակության, կիրառման մեթոդների

արդյունավետության և հնարավորությունների մասին, այնպես էլ փորձացուցադրական այցեր դեպի մշակաբույսերի աճեցման դաշտեր: Հանդիպումների ընթացքում ներկայացվել և քննարկվել են բոլոր երեք երկրների ընտրված մշակաբույսերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կիրառման տեխնոլոգիաներին, որոնք անհրաժեշտ էր ներդնել՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության ազդեցությունները:

Կարևոր է նշել, որ Բուլղարիայում փորձարարական դաշտը պատկանում էր հետազոտական ինստիտուտին և գիտափորձերի համար աջակցություն էր ստանում պետությունից: Շուրջ 200 հա տարածքի վրա հացահատիկի տեսակներ աճեցնելու և ստանալու նպատակով իրականացվում էին տարբեր փորձարկումներ (այցի ժամանակ ավելի քան 40 տեսակ հացահատիկային մշակաբույսեր կային):

Այս այցի ժամանակ մասնակիցները ունեցան հնարավորություն այցելելու տարածաշրջանում գործող կծու պղպեղների արտադրության և վերամշակման արտադրություն, որտեղ կիրառվում էին խելացի գյուղատնտեսության տեխնիկաները՝ բարձր որակի արտադրանք ստանալու համար: “Hot Farm” կոչվող արտադրությունը մասնագիտացված է պղպեղների աճեցմամբ և ունի աշխարհում հայտնի ամենակծու սորտերը (սերմերի բազայում առկա էր ավելի քան 300 սերմնատեսակ աշխարհի տարբեր երկրներից): Ֆերման ունի իր մասնագիտացված ջերմատները, ինչպես նաև համագործակցելով այլ ֆերմերների հետ՝ աճեցնում են շուրջ 15-30 տեսակ կծու պղպեղներ, որոնք վերամշակում են՝ դարձնելով սոուսներ: Այս տարի կծու պղպեղները համադրել էին մուրաբաների հետ և ստացել յուրօրինակ արտադրանք շուկային ներկայանալու համար: Վաճառքներ իրականացնում են ոչ միայն տեղական շուկայում, այլև արտահանում Հոլանդիա և Չինաստան: Հավատարիմ մնալով խելացի գյուղատնտեսության սկզբունքներին՝ “Hot Farm”-ը կարողանում է փակել արտադրական շղթան՝ սերմից մինչև վերամշակում:

Մասնակիցներին հնարավորություն էր ընձեռնվել նաև այցելելու “խոհարարական արվեստի թանգարան” կենտրոն, որտեղ խոհարարության գլխավոր մասնագետի հետ քննարկել են, թե ինչպես կարող են մթերքներն առանց թափոնների ավելի լավ վերամշակել: Քննարկումների արդյունքում դուրս բերվեց նաև համագործակցության հնարավորություն AGREEN նախագծով ստացված արտադրանքը առանց թափոնների վերամշակելու և սննդում կիրառելու նոր տարբերակներ փորձարկելու համար: Նշենք նաև, որ այս կենտրոն են գալիս աշխարհի ավելի քան 30 պետություններից խոհարարության տեխնոլոգիան ու անթափոն խոհարարությունը սովորելու համար:

շարունակելի

Common borders. Common solutions.



Project funded by
EUROPEAN UNION



Նախագիծը ֆինանսավորվում է «Սևծովյան ավազան 2014-2020թթ.» ԵՀԳ անդրսահմանային համագործակցության համատեղ գործառնական ծրագրի՝ Առաջնահերթություն 1.2 «Անդրսահմանային հնարավորությունների մեծացում հանուն առևտրի և գյուղատնտեսության ու հարակից ոլորտների արդիականացման»-ի շրջանակում: Նախագծի տևողությունն է 30 ամիս (01.06.2020թ. - 30.11.2022թ.): Ընդհանուր բյուջեն կազմում է 799 279.60 եվրո (451 640 930.776 ՀՀ դրամ, InforEuro փոխարկում, հոկտեմբեր):

ավարտ

Joint Operational Programme Black Sea Basin 2014-2020 is co-financed by the European Union through the European Neighbourhood Instrument and by the participating countries: Armenia, Bulgaria, Georgia, Greece, Republic of Moldova, Romania, Turkey and Ukraine.

This publication was produced with the financial assistance of the European Union. Its contents are the sole responsibility of **<name of the author>** and do not necessarily reflect the views of the European Union.

Common borders. Common solutions.